

ԷՍԹԵՐ ԽԵՄՉՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

(Երևան, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատարակություն, 2020, 232 էջ)

Լույս է տեսել ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող բանագետ Էսթեր Խեմչյանի «Տավուշի բանահյուսական ժառանգությունը» ուսումնասիրությունը, որն ամփոփում է հեղինակի երկար տարիների բանահավաքչական և բանագիտական աշխատանքների արդյունքները: Գիտական այս արժեքավոր աշխատանքը մի զգալի մասով հիմնված է հեղինակի դաշտային բանահյուսական գրառումների վրա:

Ծնունդով լինելով Տավուշի մարզից և մանկուց ի վեր լսելով, իսկ հետագայում նաև որպես բանագետ-բանահավաք տասնամյակների ընթացքում գրառելով Տավուշի բանահյուսական հարուստ ժառանգությունը՝ Էսթեր Խեմչյանը իր մասնագիտական գործունեության ընթացքում ի մի է բերել տարածաշրջանի սեփական և արխիվային գրառումները՝ հայ բանահյուսության տպագիր ժողովածուները համալրելով երկու շատ արժեքավոր հատորներով՝ «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարի՝ Տավուշի («Տավուշ», Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 21, 2000) և Իջևանի («Իջևան (Ձորոփոր)», Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 25, 2008) բանահյուսական նյութերի ժողովածուներով, որոնցում առաջին անգամ ամբողջացված և համակարգված ժանրային կազմով ներկայացված էր Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանների հարուստ և ինքնատիպ բանահյուսական ժառանգությունը: Եվ ահա այժմ լույս տեսած՝ «Տավուշի բանահյուսական ժառանգությունը» մենագրությունը կուտակված հսկայական բանահյուսական նյութի բանագիտական քննությունն է:

Գրքում առանձնացված հարցերի շրջանակը ներկայացնում է Տավուշի բանահյուսական ժառանգության ոչ միայն ժանրային կազմն ու դրանց տեղական առանձնահատկությունները, այլև ընդարձակ պատմաաշխարհագ-

րական միջավայրը, ուր հյուսվել և ձևավորվել, ավանդվել ու մեզ են հասել բանահյուսական այս հարուստ նմուշները:

Գրքի առաջին գլուխը ներկայացնում է մի ընդհանուր պատմական ակնարկ, որն ընդգրկում է հարուստ տեղեկություններ Տավուշի պատմաազգագրական միջավայրի, ժողովրդագրության, բնակչության հիմնական շերտերի (տեղաբնիկներ, Արցախից և Արարատյան մարզից վերաբնակեցվածներ և գաղթական արևմտահայեր) վերաբերյալ: Պատմական ակնարկն ընդգրկում է նաև Տավուշի մարզում երբևէ կատարված բանահավաքչական աշխատանքների և դրանց արդյունքների ներկայացում՝ գրառված և հրատարակված նյութերի ընդհանուր նկարագրով: Մարզում կենցաղավարող բանահյուսական նյութերի աշխարհագրությունը հեղինակը ներկայացնում է նաև Տավուշի բանասացներին նվիրված հատվածում, ուր հայտնի բանասացների տոհմերի սերնդական հաջորդականության միջոցով ցույց է տրվում բանահյուսական նյութի տեղական կամ եկամուտ լինելը: Ըստ այդմ, Տավուշի բանասացները հանդիսանում են ինչպես տեղական, այնպես էլ արցախյան, արարատյան, պարսկահայ և արևմտահայ հատվածների բանահյուսական ժառանգության կրողներ՝ վերջիններիս դեպքում՝ նյութի աստիճանական տեղայնացմամբ:

Ուսումնասիրության երկրորդ և երրորդ գլուխները նվիրված են Տավուշի բանահյուսական ժառանգության ժանրային կազմի և առանձին ժանրային դրսևորումների քննությանը: Հանգամանալից դիտարկվում են նախ վիպական բանահյուսության ժանրերի՝ հեքիաթի, զրույցի, զվարճախոսության՝ Տավուշի բանահյուսության մեջ տարածված դրսևորումները, հրաշապատում, իրապատում և կենդանական հեքիաթների համամասնությունն ու տարածվածությունը: Առանձին քննության են արժանանում արևելյան պատմավիպական կերպարների՝ Սողոմոն Իմաստունի, Ալեքսանդր Մակեդոնացու, Դանանդա Բահլուլի, Խիկար Իմաստունի, Լոխման Հեքիմի, Լենկ Թեմուրի, Շահ Աբասի, Նադիր Շահի անուններին առնչվող դիպաշարերը:

Աշխատանքի բավական ծավալուն և արժեքավոր հատվածներից մեկը նվիրված է հեքիաթի կայուն բանաձևերի քննությանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թեման հայ բանագիտության մեջ մինչ օրս առանձին քննության առարկա չի հանդիսացել, Տավուշի հեքիաթների օրինակով կատարված այս ուսումնասիրությունը կարևորվում է ոչ միայն տեղական դրսևորումների հետազոտության, այլև ընդհանրապես խնդրի քննության և տեսական դիտարկումների առումով: Հեքիաթի լեզվաարտահայտչական կայուն

կաղապարների՝ չափածո նախաբանների, սկսվածքային, միջնամասային և եզրափակիչ բանաձևերի՝ տեղական նյութի քննությամբ Է.Խեմչյանը կատարում է ուշագրավ ընդհանրացումներ և դիտարկումներ:

Աշխատանքի երրորդ գլխում ներկայացվում են Տավուշի բանահյուսության քնարական և ասութաբանական ժանրերի կազմը, առանձին տեսակների տարածվածությունը և դրսևորման տեղական յուրահատկությունները: Երգային բանահյուսության զանազան դրսևորումների՝ տարեպտույտի, հարսանեկան և թաղման ծիսերգերի և դրանց կիրառական առանձնահատկություններին, երկրագործական, աշխատանքային, ռազմի և զինվորի, մանկական և օրորոցային, աշուղական երգերի նմուշների քննությունը ի հայտ է բերում բանահյուսական այս տեսակների տարածվածության և տեղական առանձնահատկությունների պատկերը: Նույն սկզբունքով են դիտարկվում նաև ասույթաբանական ժանրերը. դիտարկվում են առածների և ասացվածքների տեսակներն ու դրանց տեղական դրսևորումները, անեծքների և օրհնանք-բարեմաղթանքների, հմայական աղոթքների, հանելուկների՝ Տավուշի բանահյուսությանը հատուկ դրսևորումներն ու առանձնահատկությունները:

Գիրքն ունի հավելված, ուր աղյուսակների տեսքով ներկայացված են Տավուշ մարզի գյուղերի բնակչության կազմը XIX դարի վերջին և մարզի բանահյուսական նյութերի պատկերը ըստ III փուլի բանահավաքների՝ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվում պահվող հավաքածուների:

Բանագիտական այս հետազոտությունը շատ արժեքավոր է Հայաստանի առանձին ազգագավառների բանահյուսական նյութերի տեղական քննության առումով: Այն ի մի է բերում տասնամյակներ ի վեր մարզում կատարված բանահավաքչական աշխատանքների արդյունքները և տեսանելի է դարձնում մարզի ժողովրդագրական, բանավոր ավանդույթի փոխանցման, առանձին ժանրատեսակների կենցաղավարման տեղական առանձնահատկությունները: Ուսումնասիրությունը կարող է օգտակար լինել ոչ միայն մասնագետներին, այլև ժողովրդագիտությամբ հետաքրքրվող լայն ընթերցող շրջանակներին:

ՆՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու,

ԵՊՀ դոցենտ

vardanyan.nvard@ysu.am